

Հարցազրույց «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի տնօրեն պարոն Ալիխանյանի հետ



- Հարգելի պարոն Ալիխանյան, ո՞րն է եղել 2017 թվականի ամենահիշարժան պահը, ո՞ր պահն է, որ կուզենայիք ապրել նորից ու նորից:

- Խիստ ընդգծված չեմ կարող նշել մի պահ, քանի որ իմ առօրյան լեփ-լեցուն է, ուստի նման պահեր հաճախ եմ ապրում: Շատ տպավորիչ պահ էր աշակերտական պառլամենտի(ShiP) փակման արարողությունը: Այդ ժամանակ շատ հուզված էի և իմ խոսքում նշեցի, որ ցանկանում եմ, որ նման պահեր բոլոր տնօրենները ապրեն, քանի որ մեծ ձեռքբերում է ունենալ սաներ, ովքեր ցուցաբերում են բարձր քաղաքացիական մոտեցում տարբեր հիմնախնդիրների շուրջ և հասուն մտածելակերպ: Հաջորդ կարևոր պահերից մեկն այն էր, երբ տեղեկացա, թե ինչպես են տեղի ունեցել մեր սաների ինքնակառավարման խորհրդի ընտրությունները. տարբեր վայրերում հպարտությամբ պատմում էի, որ Լույսիսկ ամենաքաղաքակիրթ երկրներում չեն անցկացվում այնպիսի ընտրություններ, ինչպիսին ճեմարանում կայացան: Այս փաստը պատճառ դարձավ, որ ես հանգիստ խղճով առաջարկեմ իմ գործընկերներին, որ մեր կրթահամալիրի անվան մեջ ավելանա Նաև միջազգային բառը, որը շատ քիչ դպրոցներ ունեն: Դա այնքան էլ կապված չէ Round Square-ի կամ IB-ի անդամ լինելու հետ. պետք է ապրել և առաջնորդվել այդ գաղափարախոսությամբ, որպեսզի լիարժեք ինտեգրվես միջազգային կոչում ստացած դպրոցների շարքին: Շատ հիշարժան պահ էր Նաև, երբ ստացանք հատուկ Նամակ Չիկագոյի համալսարանից, որտեղ սովորում է մեր շրջանավարտներից Կարեն Քրմոյանը, ով լավագույն սանի կոչման էր արժանացել իր ֆակուլտետում: Դա շատ պատվաբեր և մինևույն ժամանակ շատ պարտավորեցնող էր: Տպավորիչ էր Նաև այն, որ մեր սաներից Մուսայեյան Դավիթը Լույսպես ընդունվել է վերոնշյալ համալսարան: Լույսիսկ ամենափոքր իրադարձությունից կարելի է քաղել լավը և հպարտանալ դրանով: Շատ հիշարժան էր ս/թ սեպտեմբերի 1-ին բնագիտական ամբիոնի բացումը: Իսկապես, շատ հուզիչ պահ էր, քանի որ ավելի լավ է մի փոքր սպասելուց հետո անել լավագույնը, քան կարճ ժամանակում՝ վատը: Հիմա վստահ կարող եմ ասել, որ մեր լաբորատորիաները շատ մրցունակ են և լավագույններից մեկն են ամբողջ աշխարհում, ինչը գալիս է Նաև մեր ուսուցիչների պատրաստակամ և խելամիտ վերաբերմունքից:



- Ո՞րն է եղել 2017 թվականի Ձեր ամենամեծ նպատակը, և արդյոք այն իրականություն է դարձել:

- Հատուկ 2017 թվականի համար սահմանված նպատակներ չկային, քանի որ կան նպատակներ որչ կյանքի համար, այլ ոչ թե կոնկրետ տարիների: Այն նպատակները, որոնք սահմանել եմ, ոչ թե մեկ կամ երկու տարվա համար են, այլ շատ երկար ժամանակահատվածի, և իմ կարծիքով պետք է երկու անգամ ավելի շատ ապրեմ, որպեսզի կարողանամ իրագործել այդ բոլորը: Այս տարվա համար հիմնականում նպատակները աշխատանքային բնույթի էին, որոնցից կարևորներից մեկը թերևս կրտսեր դպրոցի առաջադիմության որակավորումն էր միջազգային բակալավրիատի հանձնաժողովի կողմից, իսկ մյուս տարի սպասվում է միջին և ավագ դպրոցների որակավորումը: Պետք չէ հատուկ պատրաստվել այդ այցին, քանի որ ամեն օր յուրաքանչյուր աշխատակցի և սանի կողմից ցուցաբերված պատրաստակամությունից է ծնվում բարձր որակը, որից էլ հետևում է, որ յուրաքանչյուր մարդու կարող ենք պարզ ճակատով նայել: Ամփոփելով կարող եմ ասել, որ կոնկրետ սահմանված նպատակ չկար 2017-ի համար, քանի որ դրանք ծնվում են ժամանակին համընթաց՝ տեղ գտնելով իմ նոթատետրում:

- Ի՞նչ կհիշեք ձեր մանկության ամանորյա հուշերից: Ձմեռ պապիկի ո՞ր նվերն է ամենաշատը տպավորվել ձեր մեջ:

- Իմ մանկության տարիներին այնքան տարածված չէր Ձմեռ պապիկի գաղափարը, որքան մեր օրերում: Հիմա արդեն երեխաները նամակներ են գրում Ձմեռ պապիկին և սպասում նրա այցին, իսկ մեր ժամանակ նրան միայն տեսնում էինք ինչ-որ միջոցառումների ժամանակ: Իսկ արդեն հունվարի մեկի առավոտյան ծնողներս ասում էին, թե ինչ նվեր եմ ստացել, և որ այն դրված է տոնածառի տակ: Երևի ամենահիշվող և ամենասիրելի նվերը, որ ստացել եմ, մի տնակ էր, որը ներկված էր կարմիր, կապույտ և դեղին գույներով: Ասես իրական տնակ լիներ՝ բացվող դռներով, ավտոտնակով և գեղեցիկ կահավորված:

- Ի՞նչ նվեր կուզենայիք ստանալ Ձմեռ պապիկից այս տարի:

- Շատ եմ ցանկանում, որ այս տարի ճեմարանը՝ նորանոր բարձունքների հասնի, մեր ուսուցիչները արժանավայել ապրեն, ամբողջ հայ ժողովուրդը ապրի բարեկեցիկ կյանքով, և չլինեն նյութական խնդիրներ:

- Ի՞նչ ակնկալիքներ ունեք 2018 թվականից և ի՞նչ կմաղթեք 2018-ին քնդառաջ:

- 2018 թվականի համար նույնպես սահմանված նպատակներ չունեմ, սակայն կան արդեն ծրագրված նախագծեր: Հաջորդ տարի պետք է լինի նոր գրադարանի բացումը, և այդ միջոցառման ժամանակ ակնկալում եմ ապրել նույնքան հաճելի պահեր, ինչքան որ ապրել էի 2017 թվականի սեպտեմբերի մեկին՝ բնագիտական ամբիոնի նոր լսարանների բացման ժամանակ, որն իսկապես մեծ ձեռքբերում էր: Քանի որ մեր գրադարանն արդեն շատ հին էր և չէր համապատասխանում միջազգային չափորոշիչներին, անհրաժեշտություն եղավ կառուցելու նոր գրադարան, որը զինված կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով: Շատ կուզենամ, որ ինչպես հասարակությունն է գնալով ավելի ու ավելի բարձր գնահատում ճեմարանը, այդպես էլ գնահատի պետությունը, որը շատ ավելի դժվար է, քանի որ ճեմարանը չի դավաճանում իր սկզբունքներին, իսկ դա ոչ բոլորին է դուր գալիս:

- Ընտրի՞ականություն և հետաքրքիր և բովանդակալից գրույցի համար:

**Հարցազրույցը վարեցին՝
Նարեկ Շիրվանյան
Դավիթ Չալինյան
Խմբագրեց՝ Նարեկ Շիրվանյան**

